46. ԽԵՂԹՈՒԿ ԱԽՉԻԿ

Կ'էղնի չ'էղնի, կ'էղնի մե մարթում։ Կունենա մե ախչիկում, էլ զավակ չունենա։ Էն մե ազիզ ախչիկն է, էն ախչիկ էնքան հազ կէ-նե օր իրեն լրսի հետ բարաբար։

Էդ ախչիկը սաբախտան գելնի կ'էրթա բախչեն, կրսե. «Էրթամ բախչեն, աշեմ հորս բախչեն ի՞նչ կա, քիչրմ մեյվա քաղեմ, ուտեմ»։

Կ'էրթա բախչի մեջ կը նստի գը, կը պտտվի գը, մեյվա կա, կը քաղե, կուտե, մե պզտլիկ չոր բանըմ կը պրծու, կը ցքե բերանը։ Օր կը ցքե բերանը, բդին դեմը կառնի, ախչիկը կը խեղթի, խելքը կանցնի, գեյնի վեր։

Օր գուշանա, հերը կրսե.— Էդ ախչիկը ի՞նչ էղավ, բախչեցեն չէկավ։

Մերը գելի կը վազե, գուքա բախչեն։ Կաշե օր ախչիկը խելքը անցուկ, հոդ ընկեր է։ Մերը դառնա, լալով գուքա տուն, գուքա հո-րը կրսե.— Մարթ, մեր ախչիկը բախչեն մեռեր է։

Գելնին կը վազեն, գեղանի, քուլլի գուքան էդ բախչեն։

Գուքան օր էդ ախչիկ հոտ վեր ընկուկ է։ Ախչիկը կը վերցնեն, կը տանին կը տուն։

Հերն ու մերը գուլան, կը ծեծկվին. «Մե թաք ախչիկըմ ունեի՞նք, աստված էն էլ մեզի շատ տեսավ, էն է մեր ձեռնեն առա՞վ»։

Դրկիցները կը մեղդրեն, կը հերսոտին, կրսեն.— Բերեք, էս ախչիկը մեռուկ չէ, էսոր տամբրները ձքենք, չորս օր, հինգ օր վեր դնենք ժամը թող մնա։

Կը դնեն կը, չորս օր էդ մեռելը կը մնա, չի սաղնա։

Դրկիցները դուքան էլի հորն ու մորը քով, կըսեն.

— Անօգուտ է, բերեք էս մեռելը լվացնենք, պատնենք, տանինք դնենք գերեզմանը։

Ինչեն էդ մեռելը կը լողացնեն, կը պատընքեն, կըսեն թե.— էդ ախչիկա մատը մե մատնիքըմ կա, մատնիքը անգին է, մատնիքի ակը անդին քար է, բերեք հանենք մատեն, էնոր ինք մեռեր է, էդ մատնիքը կսկիծ[1] է, ի՞նչ պիտի էղնի օր տանի հողի տակը փթեցնե։ Հազար, էրկու հազար օսկու բան է։

Հերն ու մերը չեն թողնի, կըսեն.— Մենք էսքան դեվլեթ ունենք, մալ ունենք, մենք ավլադ չունինք, ի՞նչ պիտի ընենք օր, վե՞վ պիտի ուտե, թող էդ մատնիքն է մեր մեռելի հետ էրթա, աստված սիրեք միք հանե։

Ախչիկը կը վերուն, կը տանին կը հորեն։

Էդտեղ մե ախքատ մարթըմ կէղնի, նաչար, էդ մատնըքին կը թամահի, կըսե.— Գիշերն էրթամ, էս մեռելն քակեմ, էդ մատնիքը հանեմ, էլի հորեմ, մատնիքը առնեմ գամ, բերեմ ծախեմ, ընձի էփեչա իտարա կ'էնեմ։

Գիշերը կ'էրթա, էդա ախքատ մարթը, էդ մեռելը կը փորե, ախչիկը կը հանե, պատանքը կը քակե, մատի մատնիքին կը չարըվի գը օր հանե, մատնիքն էլ մատը սխմեր է, չի էլնե։ Ոտքը դեմ կուտա ախչկա սրտին, էրկու ծեռոք մատանիքը կը քաշե։ Ոտքն օր կը սեխմե, ախչկա բկան հետ բանըմ կը թռնի, թռնելու քիմի ախչիկը սարսըմի կը թողա, թողա կը, հոգևորնա ղը։ Մարթը կը վախենա, կը թողնի ու կը փախի գը։ Կը փախի գուքա տուն։

Կընիկ կըսե.— Մարթ, ինչի՞ էդման կը դողաս։

Կըսե.— Կնիկ, էլ մի հարցու, էման մե բան էրի օր, էդա ախչրկա մատի մատնուն թամահա, ըսի էրթամ հանեմ, բերեմ ծախեմ մեզի իդարա էնենք։ Փորեցի, մեռելը հանեցի, մատնին չէր էլնի մատնեն, ինչ օր գյոքսին սխմի, մատնիքը քաշի, բանըմ բըկեն թռավ, բանըմ օր բկեն թռավ, մեռելը հոգևորցավ, ես վախեցա, թողի փախա։

Ախչիկը էդտեղ այըլմիշ կէղնի, կաշե օր գիշեր, աստղերն ելեր, ինք մեռեր է, բերած հորած է, թաքրար սաղցուկ է, գերեզմանը քակուկ, ինքը[2] մեջը նստուկ։

Ախչիկ գելնի գուքա իրեն հորը դուռը։ Դուռը կը զարկե, մերը

---

[1] Ափսոս (Ս. Բ.)։

[2] Բնագրում՝ ախչիկ (Ս. Կ.)։

գելնի դուռը կը բանա, կաշե օր իրեն ախչիկը։ Կառնի, կէրթա նե։

Գեղացիք դիմանան կը թափին, դուքան, կըսեն.

— Էս ի՞նչ բան է ախչի, դու մեռար, մենք քեղի տարանք հորինք, ի՞նչըխ էղար օր դու թաքրար սաղցար։

Ախչիկը կ'ըսե.— Օ՞ֆ, գլուխս կը ցավի, շատ անոթի եմ, մայրիկ, ե՛լ, ընձի հաց բե ուտեմ, հ'ետև ըսեմ։

Մերը գելնի հաց կը բերե, ախչիկը կուտե։

Կ'ըսեն.— Ախչիկ, դու բախչեն օր գնացիր ի՞նչըխ էղավ օր բախչի մեշ բիրդան մեռար։

Կ'ըսե.— Գնացի բախչի մեշը, պտտվա, մեյվա քաղի կերա, մե չոր բանըմ ռաստ էկավ, բիրդան գնաց բուկս, բկիս դեմ առե, էնտեղ ես վեր եմ ընկե, էլ խաբար չեմ էղե։

Կ'ըսեն.— Հապա, ի՞նչըխ էղավ օր դու գերեզմնեդ ելար։

Կ'ըսե.— Ես էման հ'աշներս բացի օր, գերեզմանս փորուկ, աստղերը ելուկ, պատանքս քակուկ, էդման տեսա, խելքս էկավ վրես, ելա էկա իմ հորս տուն։

Հերը կըսե.— Կա իսա իմ ախչկաս մատնիքի համար գերեզմանը քակած են։

Թալալ կը ձգե գը քաղքի մեշը՝ թող ճվան, ժուռ գան իմ ախչկա գերեզման քակող մարթը գտնեն։

Սաբախտան գելնին, կը ճվան կըսեն.— Էսա ախչկա գերեզման քակող մարթը վե՞վ է իսա, թող գա։

Էդ մարթը գելնի գուքա։ Գուքա կըսե.

— Վալլահ ձեզեն պայեմ, ասածումենեն ի՞նչ պայեմ, ես եմ քակե ծեր ախչկա գերեզմանը։

— Ինչի՞ քակիր դու մեր ախչկա գերեզմանը։

Կ'ըսե.— Ախչիկն օր կը լողացնեիք, ըսիք թե. «Բերեք էս մատի մատնիքը հանենք, ծանր գին մատնիք է», հերն ու մերը չթողին օր հանեիք, ես էլ ախքատ էի, նաչար էի, ըսի էրթամ էդ մատնիքը հանեմ, բերեմ ծախեմ, ընձի իդարա էնեմ։ Գնացի փորեցի, մեռելը հանեցի, մատի մատնիքը քաշի, քաշի, քաշի չելավ, ոտքս սխմի սրտին, էրկու ծեռով քաշի, ինչըխ օր քաշի, ուժով սխմի, ըկեն բանըմ թռավ, էնտեղ մեռելը սրսփաց, թողաց, աշի օր մեռելը հոգեվորցավ, ես վախեցա, էնդից թողի ու փախա։

Կ'ըսեն.— Էլախսա էս մարթու խոսքը ղորթ է, ախչիկն էլ թարիֆ արավ թե. «Իմ բկիս բան դեմ առավ, ես խեղթա, հոն տեղ վեր ընկա», էլա իսա էն է, հարիֆ օր սխմեր է, էնիկ բկեն թռեր է, ախչիկ հոգևորցել է։

Կը բերե էդ մարթուն էդոր հերը, էդոր դյունեի ղըդակ՝ մալ կուտա, հարիֆին կը փեշքրշե, կը դրկե գը իրեն տուն, կըսե.

— Դու սարար էղար, իմ ախչիկս սադցավ։

Հերն ու մերը շատ խնդան ու կուրախանան թե. «Մենք մեզի մե ախչիկ էվլեդմ ունեինք, վըրեն կը խնդայինք, մեռավ, թաքրար աստված մեմ էլ մեզի բաշխեց»։

Էն ախչիկն էլ թող ուտե խմե իրեն մուրազին հասնի, դուք էլ կերեք խմեք ձեր մուրազին հասեք։

Երկնուց իրեք խնձոր ընկավ՝ մեկը դիր գրողին, մեկը հեքաթ ըսողին, մեկ է ջամաաթին։

---

[1] Ջափ (Ծ. Ի.)։